ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

30.05.2014 15:46

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը հյուրընկալել էր ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանին և ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանին:
ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը ներկայացրել է սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի հիմնական դրույթները: Գագիկ Հարությունյանը մասնավորապես խոսել է մարդու իրավունքների և դատական իշխանությանը վերաբերող առաջարկվող փոփոխությունների մասին:
Ելույթ է ունեցել նաև ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը, նշելով, որ առաջին անգամ է մասնակցում սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի հանրային քննարկմանը մասնագիտական խմբերում, և կարևորել է այդ քննարկմանը մասնակցել փաստաբանների հետ:
ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նշել է, որ հայեցակարգով առաջարկվող կառավարման ձևի փոփոխությունը, որոշ առումով խոչընդոտելու է մարդու իրավունքներին առնչվող բարեփոխումների շուրջ առողջ մասնագիտական քննարկումներին, քանի որ հասարակության մոտ տպավորություն է ստեղծվում, որ մարդու իրավունքների բարեփոխումները երկրորդական նշանակություն ունեն:
Գագիկ Հարությունյանը և Գևորգ Կոստանյանը պատասխանել են փաստաբաններին հետաքրքրող հարցերին, որոնք հիմնականում առնչվել են երկաստիճան դատական համակարգի և երդվյալների ինստիտուտի ներդրմանը:
Այս առումով Գևորգ Կոստանյանը հայտնել է, որ ‘Իրավիճակը բերում է այնպիսի հանգուցալուծումների, որ մենք ստիպված ենք կատարել համակարգային փոփոխություններ, որպեսզի դրանք հանգեցնեն գործնական իրավունքի կատարելագործմանը և ոչ թե այնպիսի համակարգ, որը չի հանգեցնում իրավունքի զարգացմանը և իրավունքի սկզբունքի երաշխավորմանը: Եվ այս տեսակետից ես խորը համոզմունք ունեմ, որ հատկապես փաստաբանական կորպուսի հետ հանդիպումներին հատուկ ես անպայման մասնակցեմ: Ինչո՞ւ, որովհետև մասնագիտական հարթության մեջ քննարկումները շատ ավելի արդյունավետ են իմ և բոլորի համար: Եվ ձեր հետ քննարկումների արդյունքում իմ մոտեցումները կարող եմ ձևավորել’:
Անդրադառնալով դատական իշխանության կառուցվածքի և գործառույթների ոլորտին' Գևորգ

Կոստանյանը նշել է, որ ընթացիկ Սահմանադրությամբ, նշված են դատարանների հայեցողության սահմանները, բայց հայաստանյան իրականության մեջ այդ հայեցողության սահմաններն էլ անսահման են, անորոշ և ոչ հստակ, որոնք հստակեցման կարիք ունեն:

Սահմանադրական դատարանի նախագահի խոսքով,- ‘Սահամանադրական զարգացումը պետք չէ դիտարկել իրավիճակային և քաղաքական երևույթ: Այն հասարակությունների զարգացման խթանիչը պետք է համարել’:
Նա նաև նշել է, որ շատ է կարևորում փաստաբանների դիրքորոշումը սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ քանի որ ‘ինձ համար սկզբունք և համոզմունք է, որ առանց փաստաբանական ինստիտուտի լիարժեք կայացման արդարադատական համակարգը երբեք չի կարելի կայացած համարել’:
Մասնակիցները ամփոփելով քննարկման արդյունքները՝ փաստել են, որ նման հանդիպումները պետք է առավել հաճախ կազմակերպել տարբեր շրջանակներում և միասնական դիրքորոշում հայտնել սահմանադրական բարեփոխումների նոր հայեցակարգին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })